# ԱՐԴԻ ՕԿՈՒԼՏ-ՄԻՍՏԻԿԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԿԱՄ ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ

*Սկիզբը թիվ 16, 17, 19, 20*

## Է. Կաբբալա

Միջնադարում առաջացած կրոնա-միստիկական ուսմունք է հրեականության մեջ (XII-XIII դդ.), իսկ եբրայերեն QBL բառը («կաբբալա») նշանակում է բանավոր ավանդություն: Համաձայն այս ուսմունքի՝ Օրենքի գրքում (Հնգամատյանում՝ Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը) շատ բաներ գրված չեն եւ ծածկված են կամ էլ գաղտնագրված են որոշակի օրինաչափություններով, հիմնականում մաթեմատիկական կամ թվային ինչ-ինչ ձեւերով, որոնք մատչելի են միայն ընտրյալներին: Կաբբալայի աստվածն անսահման է, անպարագրելի, որի էմանացիաներով (ներհեղումներով) պայմանավորված է այս աշխարհը: Հին Կտակարանի մոնոթեիզմից բավականին հեռացած միստիկական այս ուսմունքն ազդել է միջնադարյան եվրոպական գրեթե բոլոր օկուլտ ուղղությունների, մանավանդ ալքիմիայի, աստղագուշակության, սպիրիտիզմի, մասոնականության եւ այս կարգի զանազան ուղղությունների վրա: Կաբբալայի հիմնական վարդապետական գրքերն են «Սեֆեր հա-եցիր»-ը («Գիրք արարչության»), «Սեֆեր հա զոհար»-ը («Գիրք պայծառության կամ պայծառանալու»), ուր նկարագրված են արարչության եւ մարդկային կյանքի այդ «թաքնված» գիտելիքներին հասնելու ճանապարհները: Հիմնականում այս գրքերում կիրառվում է մի թվաբանություն (ոչ այսօրվա տարրական թվաբանության իմաստով, այլ numerologia-ի համակարգի նման), որը հիմնվում է 10 եւ 22 թվերի խորհրդաբանության վրա (Աստծու 10 էմանացիաները եւ եբրայական այբուբենի 22 տառերը): Կաբբալայի ջատագովները համարում են, որ այն երկնային հայտնություն է, որ տրվում է միայն ընտրյալներին:



Կաբբալայի ավանդության համաձայն՝ այն ծագել է ավելի վաղ շրջանում Եգիպտոսում եւ Բաբելոնում ու հետագայում տարածում գտել գնոստիկների մեջ, ընդունվել թեոսոֆիայում, բոլոր միստիկական շարժումներում: Միջնադարյան կաբբալայի վառ ներկայացուցիչն է համարվում հայտնի փիլիսոփա Մայմոնիդը (Իբն Մայմուն՝ 1135-1204 թթ.): Կաբբալայի հետեւորդները գտնում են, որ «Արարչության գիրքը» թելադրել է անձամբ Աբրահամ նահապետը: Չի բացառվում, որ մորմոնականության հիմնադիր Ժոզեֆ Սմիթի «Աբրահամի գիրքը», որն ընդգրկված է մորմոնների «կանոնում», կրկնությունն է կաբբալայի այդ ավանդության. մորմոնների ավանդության համաձայն՝ այդ գիրքը գրել է անձամբ ինքը՝ Աբրահամ նահապետը, իսկ բովանդակությունն էլ գրեթե նույնն է կամ նույն հարցերին է նվիրված:

«Արարչության գրքում», որպես մեկնության ձեւ, առաջարկվում է երեք համակարգ՝ գեմատրիա, նոտարիկոն եւ թեմուրահ:

**Գեմատրիան** որեւէ բառի խորհրդաբանական՝ «թաքնված» իմաստը հասկանալու համար առաջարկում է հաշվել նրա թվային «արժեքը»: Եբրայերենում, հայերենի նման, թվերը նույնպես ներկայացվել են տառերի միջոցով եւ ամեն բառի «արժեքը» գտնելու համար գումարել են բառը կազմող տառերի թվային համարժեքները:

Գեմատրիայի այս համակարգը շատ լայն տարածում էր գտել միջնադարում, երբ բոլոր «գիտունները» փորձում էին Հայտնության գազանի թիվը որոշել (Հայտն. 13. 18): Մեզանում՝ Հայաստանում էլ տարիներ առաջ տարածվեց այս ձեւով թվային արժեքներ հաշվելու համակարգը, իբր ավետարանական ճշմարտությունների մեջ թաքնված իմաստները բացահայտելու համար, անգամ որոշ գրքեր թարգմանվեցին հայերենով եւ տարածվեցին: Անշուշտ, կաբբալայի նման ներխուժումը մեզանում այդ տարիներին գրավիչ էր եւ «ճանաչողական», քանի որ անմատչելի էր Աստծու Հայտնության բուն սկզբնաղբյուրը՝ Սուրբ Գիրքը: Իսկ տերունական խոսքերի անմիջական պարզ ու երկնային իմաստը թողած՝ ինչ-որ թվային օրինաչափությունների «հայտնաբերմամբ» զբաղվելը՝ էզոթերիկ իմաստ գտնելու նպատակով, անտրամաբանական է: Պարզ է, որ ցանկացած անձնավորության համար կարելի է ցանկացած թվային արժեք «հարմարեցնել»: Պատմությանը հայտնի է, որ նույն 666 արժեքը հաշվում ու ստանում էին ինչպես Հռոմի պապի, այնպես էլ դա քարոզող Մարտին Լութերի անվան համար: Ավելի նոր շրջանում նույն հաշվարկը ներկայացվել է գրեթե բոլոր հայտնի մարդկանց անունների համար, եւ բոլոր դեպքերում էլ ստացվել է 666: Թվաբանությանը հմուտ ամեն մեկը կարող է նման «հաշվարկներ» ներկայացնել ցանկացած հայտնի մարդու համար: Օրինակ՝ Հիտլերի պարագայում բավական է լատիներեն գրել այդ անունը, իսկ տառերի թվային համարժեքները սկսել ոչ թե 1-ից, այլ՝ 100-ից, այսինքն՝ a-ի թվային համարժեքն ընդունել ոչ թե 1, այլ 101, b-ինը՝ 102 եւ այլն:

**Նոտարիկոնի** համակարգում Հնգամատյանի նախադասությունների բառերի առաջին եւ վերջին տառերից կազմվում են նորանոր բառեր կամ նախադասություններ, դարձվածքներ ու այդպես «խորամուխ» լինում այնտեղ ամփոփված էզոթերիկ իմաստի մեջ:

**Թեմուրահի** պարագայում Հնգամատյանի նախադասությունների բառերում տեղափոխում են տառերը եւ ստանում նորանոր նախադասություններ եւ բառեր: Անգամ փոխում են այբուբենի տառերի դիրքերը, ստանում նոր արժեքներ, խմբավորում այբուբենի տառերը ու փորձում կարդալ այնտեղ թաքնված «նոր» իմաստներն ու գաղտնագրերը: Այսօր էլեկտրոնային եթերը՝ internet-ը, լեցուն է Հին Կտակարանի բնագրում (եբրայերեն) առկա զանազան թվաբանական օրինաչափությունները բացատրող նյութերով, որոնք իբր հայտնաբերվել են ժամանակակից համակարգիչների միջոցով: Այս ամենը, անշուշտ, բուն նյութից ընթերցողին հեռացնելու միտում է հետապնդում: Հայտնի է, օրինակ, որ Եսայի մարգարեի 53-րդ գլուխն ամբողջովին մարգարեություն է Հիսուսի փրկագործության մասին, որը բառացիորեն իրականացավ Գողգոթայում: Եվ ինչքան էլ թվաբանական օրինաչափություններ հայտնաբերվեն այդ գլխում, միեւնույն է, իմաստը դրանից չի փոխվի, ու այն ընթերցելիս ցանկացած ընթերցող անմիջապես մարգարեությունը կնույնացնի Նորկտակարանյան Գողգոթայի պատմության հետ: Հավանաբար այս պատճառով է Եսայու մարգարեության որոշ էլեկտրոնային եւ անգամ տպագիր հրատարակություններում 53-րդ գլուխը բաց թողնվում:

Կրոնական առումով՝ կաբբալան մոնիզմի՝ ոչ պանթեիզմի, վարդապետական հիմքի վրա է հաստատված: Մոնիզմը հինկտակարանյան մոնոթեիզմը չէ: Համաձայն մոնիզմի՝ Աստված ամեն ինչ է, մինչդեռ համաձայն պանթեիզմի՝ ամեն ինչ Աստված է: Այս առումով՝ կաբբալան առանձնացնում է Աստծու 10 էմանացիաներից (սեֆիրոթ) վեր գտնվող եւ անճանաչելի ու անսահման Աստծուն՝ Էյն Սոֆին: Էյն Սոֆի տասը էմանացիաներն են միայն մատչելի եւ ճանաչելի: Ամեն էմանացիա ծնում է հաջորդին, որոնք էլ լցնում են տիեզերքը: Այս է կաբբալայի տիեզերաբանությունը:

Պարզ է, որ նման պատկերացումներն անմիջապես չեն բխում Հին Կտակարանից, եւ այդ օկուլտ պատկերացումներին հենց դեմ է Սուրբ Գիրքը: Էյն Սոֆն անդեմ է եւ անճանաչելի, մինչդեռ հինկտակարանյան «Էյն Սոֆը» մատչելի ու դիմավոր է: Կաբբալայի Էյն Սոֆը տրանսցենդենտ, այսինքն՝ անճանաչելի է, որն իր 10 էմանացիաներում է «ճանաչելի» դարձնում իրեն: Նորկտակարանային իմաստով էլ այդ պատկերացումն անընդունելի է (Պողոս առաքյալը հակառակն է ասում Ա Տիմ. 2.5-ում):

*Շարունակելի*

***Ղեւոնդ քհն. ՄԱՅԻԼՅԱՆ***
***Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ՔԴԿ***

> ***«Սավուղը մեռավ իր այն անօրենությունների պատճառով, որ գործել էր Տիրոջ դեմ, Տիրոջ խոսքը չպահելով՝ վհուկներից խորհուրդ էր հարցրել, փոխանակ Տիրոջը հարցնելու: Նրան դեմ էր կանգնել Սամուել մարգարեն: Տերը սպանել էր նրան եւ թագավորությունը վերադարձրել Հեսսեի որդի Դավթին» (Ա Մնաց. 10, 13-14):***

# ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

## (համառոտ ակնարկ)

*Սկիզբը՝ թիվ 19, 20-ում*

Ս. Գր. Նարեկացին, անկասկած, անգիր գիտեր Հին եւ Նոր Կտակարանները. այս մասին նա ինքն է վկայում.

«Ունեմ Մովսեսին իր օրենքներով՝
Մահացածների աշխարհից եկած,
Մարգարեների գրքերը բոլոր՝ գրված հոգուս մեջ,
Եվ մասյանները առաքյալների՝
Շարված իմ մտքի մասերի վրա,
Տիրոջդ համայնի հանդերձ Կտակով Իր ավետաբեր...» (Ս. Գր. Նարեկացի, «Մատյան ողբերգության», Երեւան, 1979, ԿԴ, Բ):

Ուսումնասիրողներն իրավամբ պնդում են Նարեկա վանքի մեծ ճգնավորի մասին. «քաջ եւ մանաւանդ անգիր սերտող մը միայն պիտի կրնար այնքան նիւթ եւ հիւթ քաղել անկից» («Լոյս» շբթ., Կ. Պոլիս, 1906, թիւ 46): Գր. Նարեկացու «Մատյանում» հանդիպող սուրբգրային մեջբերումների թիվն անցնում է 1000-ից:

Ասողիկը Սեւանի վանքի մասին գրում է, որ այնտեղ «հավաքվեցին բազում եղբայրներ՝ ստանալով բազմաթիվ Սուրբ Գրքեր, որպեսզի լուսավորվեն հոգու աչքերը՝ տեսնելու Տիրոջ ճանապարհը՝ ըստ իր անստվեր ուղեւորությունների» (Ստեփանոս վրդ. Տարոնացի, «Տիեզերական պատմութիւն», Փարիզ, 1853, էջ 146): Մովսես վարդապետը՝ ապագա կաթողիկոսը, Երեւանի հյուսիսային կողմում՝ ներկայիս Ս. Աստվածածին (Ջրավոր) եկեղեցու տարածքում, վանք է հիմնում. «Նրա մոտ հավաքվեցին բազմաթիվ միաբաններ, միայնակյացներ, Սուրբ Գրքի իմաստուն ու սրբակյաց աշակերտներ: Մեծ ու փոքր միասին սիրով ու խաղաղ մնում էին խցում՝ միշտ աղոթելով ու Սուրբ Գիրքն ընթերցելով» (Առաքել Դավրիժեցի, «Պատմություն», Երեւան, 1994, էջ 46):

Սուրբ Գրքի ուսումը, սակայն, չի սահմանափակվում միայն հոգեւորականների ու վանականների դասով:

Ս. Սահակն ու ս. Մեսրոպը, ըստ Կորյունի վկայության, Ս. Գրքի թարգմանությունից անմիջապես հետո «աստվածային իմաստությամբ կրթեցին հենց այնտեղ իրենց մոտ եղած արքունիքը ամբողջ ազատագունդ բանակի հետ: Երանելի Սահակն ուսման վարժությամբ զբաղեցնում էր ավելի Մամիկոնյան մարդկանց, որոնց առաջինի անունն էր Վարդան, որ եւ Վարդկան էր կոչվում: Նույնպես ամեն մարդու աշխատում էր նա կրթել, հասկացնել ճշմարտության գիտությունը» (Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երեւան, 1994, էջ 36):



Ս. Սահակն ու ս. Մեսրոպը լծվեցին ամենուր նոր դպրոցներ հիմնելու գործին ոչ միայն կղերի, այլեւ ազնվականների ու ռամիկների համար, որտեղ դասավանդման անկյունաքարը դարձյալ Ս. Գիրքն էր, որ մեր մատենագրության մեջ հանդիպում է «Սուրբ Գրոց ուսում», «գիտութիւն Աստուծոյ», «շնորհք պատուիրանացն Աստուծոյ» եւ այլ անուններով: Բոլորի աչքերն այսուհետ ուղղվում են դեպի Վաղարշապատ, որտեղից բխում էր «բացեալ աղբիւրն Աստուծոյ», եւ դեպի ուր շարժվում էին գունդ-գունդ՝ Ս. Գրքով լուսավորվելու համար:

Ղազար Փարպեցին վկայում է. «Անվերջ բխում-հոսում էին մեկնությունների խոսքերը, որոնք մարգարեների գաղտնին հայտնի դարձնելով՝ ամբողջ ժողովրդի առաջ էին դնում հոգեւոր կերակուրներով լեցուն սեղանը: Իմաստության հետեւողներն էլ ճաշակում էին դրանք եւ իրենց քիմքերը քաղցրացնում՝ ըստ սաղմոսերգուի խոսքի, որ ասում է. «Վարդապետության խոսքերն առավել են, քան խորիսխը մեղրի» (տե՛ս Սաղմ. ԺԸ 11): Եվ որպեսզի միանգամից ասեմ, ըստ Եսայի սուրբ մարգարեի խոսքի, հայոց ամբողջ երկիրն Աստծու գիտությամբ լցվեց ս. Սահակ հայրապետի հոգեւոր քարոզներից, որոնք բազում վտակների պես ծովերն էին լցնում» (Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն», Երեւան, 1982, էջ 41):

Իսկ երբ պարսիկները մտադրվեցին արմատախիլ անել քրիստոնեությունը, հանդիպեցին հայ ժողովրդի աննկուն կամքին. «Մեզ հայր ենք ճանաչում սուրբ Ավետարանը եւ մայր՝ Առաքելական Կաթողիկե Եկեղեցին. թող ոչ ոք, իբրեւ չար անջրպետ մեջ ընկնելով, մեզ սրանից չբաժանի» (Եղիշե, «Վարդանի եւ հայոց պատերազմի մասին», Երեւան, 1989, էջ 135): Ավելին, այդ օրհասական օրերին «աստվածային Կտակարանների ընթերցումը երբեք չէր դադարում՝ ոչ մի ժամ» (նույն տեղում, էջ 137): Իսկ թշնամու դեմ «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» ելած քաջ դյուցազնի մասին նույն պատմիչը գրում է. «Մանկությունից տեղյակ էր սուրբ Կտակարաններին» (նույն տեղում, էջ 213): Նրան հարած շատ իշխաններ ու նախարարներ «Սուրբ Գիրքը սովորել էին մանկությունից» (նույն տեղում, էջ 43): Սա հաստատվում է նաեւ Ղեւոնդ Երեցի խոսքում. «Ինձնից ավելի տեղյակ եւ հմուտ եք սուրբ Կտակարաններին» (նույն տեղում, էջ 219): Իսկ Ավարայրի ճակատամարտից առաջ քաջ Վարդանը զորքին քաջալերելու համար կարդում է Մակաբայեցիների գիրքը:

*Շարունակելի*

***Գրիգոր ԴԱՐԲԻՆՅԱՆ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝** Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝** Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
**Գլխավոր խմբագիր՝** Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝** ք. Վաղարշապատ, ՔԴՔԿ
**հեռախոս՝ (0+31) 56780**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստոր. է տպագր. 16. 11. 2001 թ.
**Տպաքանակը՝ 2500** **Գինը՝ 50 դրամ:**